



Հակոբ Պարոնյան

Ազգային շոշեր

ՄՏԵՓԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ

Ըղա... ըղա... ըղա...

Եւ ահա կիները կը սկսին իրենց դիտողութիւնները յայտնել, ինչպէս Պ. Տիրայր շնորհաբար իւր քննադատութիւնները հրատարակել նոր գիրքի մը... կազմին վրայ:

Մանկութեան առաջին ձայնը նոր աշխատասիրութեան մը ծանուցումն է, գոր նախ դրացի կիները լսելով կը փութան գործը տեսնել եւ քննադատել:

Այն քննադատութիւններն, որ նորատիպ երախաներու վրայ եղած են, շատ աւելի օգուտներ ընծայած են ազգին, քան անոնք, որ նորատիպ մատեաններու վրայ գրուած են: Պատճառը պարզ է եւ յայտնի: Երախայի հեղինակներն իրենց առաջին երկին պակասութիւնները տեսնելով՝ աշխատած են միւս գործերն նուազ թերութեամբ ի լոյս ընծայել: Միթէ կիներու քննադատութեան պտուղը չէ՞ տեսնել, որ անդրանիկ մը միշտ հօր մը եւ մօր մը գլուխ գործոցը չէ եւ միշտ կրտսերներն են, որ պատիւ կը բերեն իրենց հեղինակներուն՝ որք միայն իրաւունք ունին այսօր պարծենալով իրենց մէկ կրտսեր գաւակին ձեռքէն բռնել՝ ազգին ներկայացնել գայն եւ ճակատաբաց կրկնել այն խօսքը՝ գոր Մամուրեան ըսաւ Պ. Նորայրի բառարանի նկատմամբ, թէ «Շատ աւելի դիրին է բանադատել գործ մը քան յօրինել, քանի որ բանադատութիւնը սովորաբար մի քանի էական սկզբունքի վրայ լինելով՝ ընդհանուր տեսութիւններ կ'ընէ քննելի գործի մասին. մինչդէռ հեղինակութիւն մը աշխատութիւն եւ հմտութիւն կ'ենթադրէ»: Գիրքի հեղինակներն այսպէս վարուած չեն դժբախտաբար: Ասոնք ոեւէ

բանադատութիւն իբրեւ յարձակում նկատելով՝ շարունակած են իրենց միւս երկերն օժտել ճոխ... թերութիւններով: Սուտ խօսած չենք ըլլար, եթէ թող տրուի մեզ խոստովանիլ, որ մեր ազգն այսօր ունի աւելի հանճարեղ մարդեր, քան հանճարեղ երկեր: Եթէ մեր հարուստները հրատարակութեան ծախքը հոգային՝ աւելի հանճարի տէր մարդեր պիտի ունենայինք: Բայց հարուստները չեն յօժարիր այս բարիքն ընելու: Ինչո՞ւ, վասն զի իրենց ծախքով սնած, մեծցած ու դաստիարակուած տղաներու ճակատը չպիտի կրնան գրել, տպագրեալ եւ հրատարակեալ արդեամբ եւ ծախիւք... աղայի, ինչպէս գրել կու տան ճակատն այն գիրքերու՝ որոնց տպագրութեան ծախքն իրենց քսակէն կու տան:

Արդ, քանի որ կիներուն քննադատութիւններէն այսչափ օգուտ քաղած է ազգը, կը ներե՞ս, ընթերցող, որ անոնց ձայնը խղդեմ: Հարկաւ ո՛չ:

Ըղա... ըղա... ըղա...

Խօսքը ձերն է, կիներ՛ր. բայց կ'աղաչեմ շատ մի՛ երկնցնէք...

Ոտքդ պագնեմ, ի՛նչ սիրուն տղայ:

Տիկին Մարթա, տես, ի՛նչպէս աղուորիկ է:

Երախան կը ժպտի:

Ո՛վ շողորորթութիւն... ամէն տարիք կը սիրէ գրեզ:

Ադ ի՛նչ սեւ մազեր են, քուրո՛ւկ... ներկուած են կարծես...

Ըղա... ըղա... ըղաաաաաաաաաաա

Ի բաց գնա, ո՛վ ճշմարտութիւն... ի՞նչ գործ ունիս մեր մէջ...

Արեւուն մեռնիմ, շատ խելացի գաւակ է:

Երախան հաւանութեան ցոյցեր կ'ընէ:

Մեծ մարդու պէս աչքերը չորս դին կը պտտցունէ:

Ըղա... ըղա... ըղա...

Ես չէի ըսողը, մեղայ...

Ի՛նչ բարկացող տղայ...

Ըղա... ըղա... ըղա...

Երեսներուն վրայ վարդ է բացուեր:

Ծիծաղը վերստին կը փայլի:

Աստուած թշնամիիս ասանկ գաւակ տայ:

Ըղա... ըղա... ըղա... ըղա...

Աս տղուն ի՛նչպէս խօսելու է, գովեստէն ալ չախորժիր:

Կ՛ախորժի. բայց շատ սրամիտ ըլլալով՝ կարծեց թէ թշնամիէդ վրէժ լուծելու համար՝ թշնամիիս ասանկ գաւակ տայ ըսիր:

Ես ձեզի բան մը ըսե՛մ. այս տղան կատակէ չախորժիր:

Ասոնք են ահա դիտողութիւններն, գորս դրացի կիներն ըրին սոյն երկասիրութեան կազմին եւ գեղեցկութեանը վրայ, մեզի թողլով անշուշտ անոր պարունակութեանը վրայ մերիներն ընել:

Ստեփան Ասլանեան, աշակերտ ճեմարանի, դարձեալ աշակերտ արքունի բժշկական դպրոցի, վարժապետ Ստեփան Փափագեանի, կատավարիչ ազգային երեսփոխանական ժողովոյ, ծնաւ: Ծնիլը հաստատապէս գիտենք, բայց ծննդեան թուականին ճշտութեանը վրայ չենք կարող պնդել: Եւ իրաւունք ալ ունինք, վասն զի սուրբերու տօնախմբութեան օրերուն պէս ամէն տարի կը փոխուի մեծ մարդերու ծննդեան... տարին: Չենք պնդեր, բայց շատ հաւանական է որ 1825-ին ծնած ըլլայ. որովհետեւ երբ անգամ մը նկատողութեան առնենք այն վաղն, որով կը հալածէր Խրիմեանը՝ որ ծնած է 1823-ին, իսկոյն կրնանք մակաբերել, որ Խրիմեանի աշխարհ գալն իմանալէն անմիջապէս ետքը ճամբայ

ելած ըլլայ:

Ստեփան Ասլանեանի օրօրանն ըլլալուն վրայ իրատունք ունի պարծենալ այսօր Բերայի թաղն, որուն վարժարանին մէջ առաւ առիծորդին իր առաջին... որսը: Սրամտութեանն ու ճարակութեանը շնորհիւ, սուղ ժամանակի մէջ իր դասընկերները ճեղքելով առաջ անցաւ: Այնչափ կը վազէր դասերուն մէջ, ինչպէս նաեւ փողոցներու մէջ, որ վարժապետը կը խորհէր գայն գտնուած դասէն հանելով ուրիշ դասատու մը բերել տալ եւ անոր յանձնել. սակայն մէկ աշակերտին մէկ դասատու յատկացնելու դիմադրութիւն կ'ընէր թաղական... սնտուկը: Կը զգար ինք, որ դասընկերներուն ծուլութեանը կը գոհուէր, որով կը ստիպուէր իր գործը քալեցնելու համար շատ անգամ անոնց օգնել: Երբ ընկերները դասի կ'ելնէին, ինքը յուշարարի պէս անոնց ետեւէն կ'ըսէր այն օրուան դասն, ինչպէս երեսփոխանական ժողովոյ մէջ կ'ըսէր դասընկերներուն իրենց համարը: Իր անդուլ աշխատութեամբն յաջողեցաւ չորս ամսուայ մէջ ուսանիլ Համաձայնութիւնը, գոր չէ կրցած սակայն գոյացնել օր մը ժողովոյ մէջ: Տէր բային ո՛ր ալ գտնուէր, անմիջապէս կը ճանաչէր, կարծես պարտք ունէր անոր: Վերջապէս օր մը դասատուին քանի մը սխալները գտնելով, համոզուեցաւ, թէ այդ վարժարանն անկարող էր յագեցնել անօթութիւնն, գոր կը... սնուցանէր սրտին մէջ ուսման եւ գիտութեան համար: Բախտատուր էր, վասն զի այն ատենները ազգին զաւակներուն դաստիարակութեանը համար խորհող հարուստ գլուխներ եւ մարդեր կային:

1838-ին՝ բարեյիշատակ Կարապետ ամիրայ Պալեան եւ անոր քեռայրը՝ Յովհաննէս, արքունի ճարտարապետներ, որոշեցին, ազգային մանկտոյն լոյս տալու նպատակաւ, Իսկիտարի Երուսաղէմի վանքն հիմնէն նորոգելով վարժարանի փոխարկել: Այս որոշման վրայ ուրախացաւ Ստեփանիկն, ինչպէս կ'ուրախանայ աղջիկ մը, երբ իրեն ըսեն. ել, պարահանդէս տանիմ քեզի: Այս ամիրաները Երուսաղէմի պատրիարքին իմացուցին իրենց որոշումը, խնդրելով նորին սրբազնութենէն, որ այդ շէնքն ազգին շնորհելու հաճելէն ետքը՝ բարեհաճի նաեւ տարին հարիւր քսան հազար դահեկան տալ աղքատ տղաներու կրթութեան համար: Նորին սրբազնութիւնն, որու անունն բարեբախտաբար Եսայի չէր, որ օր մը ելնէր եւ ազգին ըսէր՝ վանքը քսանհինգ հազար ոսկի պարտք ունի. օրինեալ ժողովուրդը բարեհաճի գայն վճարել, ընդունեց իրեն

ներկայացուած առաջարկութիւնը: Հայկական հաստաբազուկ եղբայրներ փլցուցին այդ մեծ վանքը... տասը վայրկեանի մէջ, ինչպէս կործանեցին Արմաշու միաբանները հոմանուն վանքը, ինչպէս պիտի կործանէ օր մը Մամբրէ Մուշի վանքը, եթէ դեռ կործանուած չէ: Այո՛, տասը վայրկեանի մէջ. իրարու երես նայելու հարկ չկայ. եթէ չէք հաւատար՝ ցոյց տուէք ազգային շէնք մը եւ հիմնայատակ ընենք տասը վայրկեանի մէջ... հայու արիւն կը կրենք մենք: Քանի մը շաբաթ ետքը վարժարանի մը շինութեան ձեռնարկեցին եւ քանի մը ամիսէն վանքին տեղ կանգնեցին վարժարան մը, զոր արիստոտէլեան ճաշակով կոչեցին ճեմարան, ուր պիտի դասախօսէին դասատուները... պատկերով: 1838 դեկտեմբերի 9-ին ճեմարանի դռները բացուեցան: Ասլանեան գիրքերը ժողվելուն պէս վազելով ճեմարան մտաւ, եւ հագիւ թէ դասերու բաժանումը պիտի սկսէր՝ ամիրաներու դասուն բաժանումը սկսաւ:

Քանի որ ճշմարտութիւն է, ինչո՞ւ վախճանք ըսելու թէ մեր դաստիարակութեան շէնքերը Եանոսի տաճարներ էին մինչեւ մօտ ժամանակներս. եթէ կոռոյ ժամանակ չէին բացուեր անոնց դռները՝ գոնէ բացուելուն պէս կոհուր կը սկսէր եւ փակուելուն պէս խաղաղութիւնը վերստին կը հաստատուէր: Ճեմարանի բացուելէն քանի մը ամիս ետքը, մէկ կողմէն աշակերտներու ոմանց ծնողքը մեծ զրկանք կը համարէին իրենց տղաները ճեմարան դրկելէն ետքը տարեկան թոշակ վճարելը: Միւս կողմէն ամիրաներու մեծագոյն մասը կը փափաքէր, որ ի փառս ազգին ճեմարանը... կործանուի, սպառնալով, որ եթէ անոր դռները չփակուին՝ պիտի ստիպուէին ֆալախայի առնել... ճեմարանը: Ազգին պատիւը կը պահանջէ, որ, կ'ըսէին, ճեմարանը գոցուի: Այս լուսոյ տաճարն սկսաւ օրըստօրէ պարտքի տակ ճնշուիլ: Ամիրաները յաջողեցան Երուսաղէմէ առնուելիք հարիւր քսան հազար դահեկանի վճարումն ուշացնելով եւ իրենց ծանօթներուն գաւակները ճեմարանէն քաշելով փակել տալ անոր դռները, հակառակ այն ջանքերու, զորս ժողովրդեան արհեստաւոր մասը թափեց կանգուն պահելու համար այդ շէնքը: Քանի մը տարի կոռոյ ասպարէզ ըլլալէն ետքը՝ 1841 հոկտ. 3-ին՝ դռնփակ նիստ ըրաւ ճեմարանը... իբրեւ պատճառ խռովութեան... կեցցէ ամիրայութիւն...

Ձեզ կը հարցունեմ հիմա. ասանկ վարժարանի մը մէջ ի՞նչ կրնար սորվիլ Ասլանեան. անշուշտ լաւ կոհի ընել. եւ եթէ այսօր ազգային կոհիներու մէջ մեծ

համբաւ հանած է, այն ալ ճեմարանի պարտաւոր է: Չմոռնանք սակայն հոս յիշել, որ հոն հասնողուցաւ Ասլանեան, թէ անհրաժեշտ պէտք է սահմանադրութիւնը հաստատել, որպէսզի ամիրայութիւնը կործանուի: Ամէն ազգերու մէջ այսպէս եղած է, երբ միապետութիւնն սահմանէն անդին անցած է՝ ծնած է հասարակապետութիւնն՝ որ միապետութեան ծնունդ տուած է, երբ օրէնքը չարաչար գործածած է: Ես ժամանակ չունիմ հիմա պատմութենէն, ոչ ալ Ալֆիերիի բռնաւորութիւնէն ապացոյցներ մէջ բերել հոս. եթէ իմ տեղս բժիշկ Շիշմանեանն ըլլար՝ երկար յօդուածով մը կը հասկցնէր ձեզ թէ միապետութիւնը սահմանադրութենէն կ'ելնէ, թէ սահմանադրութիւնը միապետութենէն:

Այնչափ զգուցաւ Ասլանեան ամիրաներու բռնած ընթացքէն, որ ամիրաներու հետ բոլոր մարդերն ալ սկսաւ ատել. ահ, կ'ըսէր օր մը, ջրհեղեղ ըլլայի եւ ամէնը ջնջէի: Շատ ուշ հասկցաւ անշուշտ, որ նախախնամութիւնը մարդերը ջնջելու համար ջրհեղեղէն ետքը բժիշկները դրկեց աշխարհ, որք հին ժամանակներու մէջ ջրհեղեղէն աւելի գործ տեսան, շատ ուշ հասկցաւ, բայց բնութիւնը շատ կանուխ զգացուց իրեն թէ բժիշկ ըլլալու էր: Եւ արդարեւ քաջ բժիշկ ըլլալու համար նախ եւ առաջ ի՞նչ պէտք է ունենալ: Ապատաժի ձեռով սիրտ մը: Ե՞տքը: Ետքը՝ դանակ, ասեղ եւ դերձան: Ուրի՞շ: Մատիտ մը եւ կտոր մը թուղթ: Ասլանեան այս ամէնն ունելով ունէր, մանաւանդ առաջինը, որու շնորհիւ կրնար սառն արիւնով ձեռք կտրել, աչք հանել, ոտք կտտրել, եւ վերջը կարել: Եթէ նոր աշխարհը բժիշկներու համար ալ կարի մեքենաներ հնարէր՝ բժիշկները այս ձանձրութենէն ալ կ'ազատուէին, մանաւանդ հիւանդներն ալ չարչարանքէն: Ասլանեան, ինչպէս ըսինք, բժշկութեան կոչում ունէր, ներգործապէս եւ կրաւորապէս, ուստի ճեմարանէն ելնելէն քանի մը ամիս ետքը, արքունի բժշկական վարժարանը գնաց: Դարձեալ իւր մեղուաշան աշխատութեամբն սորվեցաւ, թէ ինչպէս կը սպաննուին մարդեր... առանց զէնքի... Երբ կը տեսնեմ մարդասպան մը, որ դատի ելած ժամանակը իւր յանցանքը պարապ տեղը ուրանալու կ'աշխատի, կը զարմանամ, թէ ինչու դատաւորներուն դատնալով ես բժիշկ եմ չըսեր՝ ինքզինքը արդարացնելու համար: Երբեք ամիրաներու կամ պատրիարքներու առջեւ ծունկ չոքելով յանձնարարական թուղթ չմուրաց, միայն իւր խելքէն, ջանքէն յանձնարարուելով աստիճանէ աստիճան բարձրացաւ: Տասնապետ, յիսնապետ, հարիւրապետ, հազարապետ ըլլալէն ետքը փաշայութեան բարձր աստիճանն ելաւ, ուր կը վախճան եւ ելնելու: Ահա մարդ

մը, որ կրնայ ըսել հանդարտ խղճմտանքով եւ պարծանքով իմ գործերուս գաւակն եմ: Այսօր սուր մ'ալ կը կախէ մէջքէն, որպէսզի դեղերովը եթէ չկարենայ նպատակին հասնիլ՝ սուրը քաշէ: Կը փափաքէի, որ բոլոր բժիշկներն ալ մէյ մէկ սուր կրէին, իբրեւ նշան իրենց արուեստին: Կրնանք վկայել իրեն համար, որ արհեստը չարաչար չգործածեր, երբեմն աղքատներն ալ կ'այցելէ առանց դրամ ընդունելու այսպէս չվարուող բժիշկներն բամբասանքի կ'ենթարկուին. լաւ, բայց գնա հարուստ վաճառականի մը եւ աղքատի մը համար կտաւ ուզէ, կը ծաղրեն քեզի չեն ալ բամբաստիք: Օր մը երկու ծեր եւ հիւանդ կիներ իրեն դուռն ափ առած էին: Սպասաւորն դուռը բացաւ եւ կարծելով, թէ այս կիներու ներկայութիւնն ձանձրոյթ կը պատճառէ փաշային՝ վոնտեց զանոնք ըսելով, ինչպէս որ սովորութիւն է.

Հոս չէ, դուրս ելաւ:

Փաշան վերէն իմանալով եղելութիւնը՝ պատուհանը բացաւ եւ ըսաւ.

Թո՛ղ տուէք կիներուն ինձի գալ:

Եւ այդ ծերերը քովն առնելով անոնց բազկերակները քննեց, բայց ոչ ունելիով, ինչպէս կ'ընեն փափուկ բժիշկներէն ոմանք. դեղագիրը գրեց եւ ճամբեց:

Մինչեւ հոս իբրեւ Ասկղեպիոսի աշակերտ ներկայացաւ Ստեփան փաշան. ասկից ետքը պիտի տեսնենք զինք ազգային ասպարէզին մէջ Անաքարսիսի աշակերտ ատենախօսութեան մէջ. Մովսէսի հետեւող... օրէնքներու գործադրութեան մասին, եւ կենդանի Պրոտէոս... գոյն փոխելու տեսակէտով:

Սահմանադրութեան հաստատութեան օրերը կը մօտենային, եւ ինքը կ'ուրախանար, որ ամիրաներէն վրէժ լուծելու ժամը պիտի հնչէր, այս պատճառով աշխատակից կ'ըլլար այն ամէն անձերու, որ պատիւ ունին այսօր Սահմանադրութեան հաստատող անունը կրելու: Ժամը հնչեց. Ֆալախսան վերցուեցաւ եւ Սահմանադրութիւնը հրատարակուեցաւ: Ուրախութենէն նոյն օրը քանի մը ամիրայ ծաղրեց:

1862-ին անդամ եղաւ Սահմանադրութեան Գործադիր ժողովին, որ չկրցաւ գործադրել Սահմանադրութիւնն՝ անոր համար, որ միւս անդամները Ստեփան փաշային պէս խիստ չէին գործադրութեան մէջ:

1863-ին քաղաքական ժողովոյ անդամ եղաւ, եւ առաջարկեց, որ ազգային լրագիրներուն բերանը սանձ դրուի: Սահմանադրութեան բարեկամէ մը ասանկ առաջարկութիւն լսելը շատերուն զարմանք պատճառեց. բայց արդարացոյց ինքզինք, առարկելով, թէ՛ սանձ դրուի ըսի, բայց չըսի թէ սանձ դրուելէն ետքը կառքերու լծուին: Այս առարկութիւնն այն ատեն իբրեւ գոհացուցիչ նկատուեցաւ, բայց Ստեփան փաշայ չկրցաւ իւր վրայէն վանել ժողովրդեան այն համոզումը, թէ՛ իւր կարծիքները դեռ հաստատ հիման վրայ չեն, եւ թէ այնքան փոխուելու ենթակայ են, որքան մարդուս դիրքը:

1874-ին Երեսփոխանական ժողովոյ ատենապետութեան արժոյն վրայ ելաւ նստեցաւ: Գլուխ եղաւ ձախակողմեան անուանուած երեսփոխաններուն՝ որք կը պնդէին, թէ ազգին շահերը պաշտպանելու վրայ հիմնուած է իրենց կուսակցութիւնը, թէպէտեւ աշակողմեաններն ալ պոռալէ չէին դադրեր՝ թէ իրենք են ազգային շահուն պաշտպանները: Ձախ կողման մէջ այնչափ խորը գնաց, որ աշ կողմէն եկած հիւանդները չէր բժշկեր, կամ, լաւ եւս, չէր մեռցուներ: Ատեն եղաւ, ուր յայտնեց թէ Սահմանադրութեան վերաքննութիւնը ազգային շահերուն հակառակ էր. սակայն ժամանակ ալ եղաւ, ուր ոչ միայն համաձայն դատեց, այլ վարչութեան կազմակերպութեան համար ծրագիր մ'ալ պատրաստեց եւ Փունջ լրագրի մէջ հրատարակել տուաւ: Իւր ատենապետութեան օրովն էր, որ յաջողեցաւ Խրիմեանը վար առնել՝ Սահմանադրութեան կէտերը, ստորակէտները, բութերը չգործածելուն համար, որոնց անգործադրելի ըլլալն ինքն ալ հաստատեց վերջէն իւր պատրաստած ծրագրովը: Քանի մը անգամներ դռնփակ նիստ ընելով՝ ժողովուրդը դուրս հանեց. խորաններուն ետեւը փնտռել տուաւ եւ քիչ մնաց, որ Աստուածածնայ պատկերն ալ դուրս հանել պիտի տար, որպէսզի ճնշման ներքեւ շխօսին երեսփոխանները: Երբեմն ալ ատենապետութիւնը վարեց այն նաւապետին պէս, որ նաւուն մրրիկի բռնուած ժամանակը օթեակը կը քաշուի եւ հրաժարական կը գրէ նաւուն տէրերուն: Ի վերայ այսր ամենայնի խոստովանիմք նաեւ, թէ մեծ յարմարութիւն ունի ժողովը կառավարելու... երբ մրրիկ չկայ: Այնչափ լաւ համոզել գիտէ, այնչափ քաջ

ուսած է կիրքերը յուզելու, կամ, եթե ուզե, խաղաղելու արհեստն, որ կարող է գոյգ
մը աղանձներու իրարմէ պաղեցունել, կամ, եթե ուզե, կատուի եւ շան մէջ սէր եւ
միութիւն հաստատել: Երբեմն երեսփոխաններն իրարու հետ գուգակշռելով
կ'ըսէի. Օտեան խորհելու է, Ասլանեան խօսելու է եւ Փափագեան գործելու է. եւ
ամէն անգամ, որ ազգը տագնապալից ժամանակներ ունեցած է, ամէնուն ըսած
եմ. կ'երեւի որ դարձեալ Ասլանեան կը խորհի, Փափագեան կը խօսի եւ Օտեան
կը գործէ: Այսպէս վեց եօթը տարի ատենապետութեան պաշտօն վարած է:
Թէպէտեւ եթէ այսօր օրակարգը աչքէ անցունելու ըլլանք՝ կը տեսնենք, որ ուրիշ
բան չէ, եթէ ոչ բանտ մը՝ որուն մէջ եօթը տարիէ ի վեր բանտարկուած խնդիրներ
կան, գորս հարցնող փնտրող չկայ. մեռած խնդիրներ ալ պակաս չեն հոն:
Օրակարգին մէջէն ելնող խնդիրները փախչելով բանտէն խալտողներուն կարգէն
են: Մակայն ասոնց պատասխանատուութիւնը ատենապետին վրայ բեռցունելն
անիրատւութիւն է. վասն զի քանի որ երեսփոխանութիւնը միշտ շնորհակալութիւն
յայտնած է իր ատենապետին, դիւրին է գուշակել թէ ուրիշ ատենապետի մը օրով
ոչ թէ միայն խնդիր մը, այլ երեսփոխաններն ալ չպիտի կրնային ելնել
օրակարգին մէջէն:

Գրական ասպարէզին մէջ մտած չէ, թէպէտեւ կրնար հոն աթոռ մը ունենալ: Եթէ
քաջ խօսելու, մարդ համոզելու արհեստը պարունակող գիրք մը հրատարակէր՝
մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէր ազգին: Վասն զի մեր
երիտասարդներէն շատերն, որ ինքզինքնին պերճախօս կը կարծեն՝ մինչեւ
այսօր օգուտ քաղած չեն մարդ համոզելու արհեստէն... երբ հացավաճառի մը
կամ մսավաճառի մը առջեւ գտնուին: Ստեփան փաշան եթէ փափաքէր՝
դժուարութիւն չէր կրէր նաեւ հրատարակելու գիրք մը Առողջաբանութիւն
անունով եւ որուն մէջ ընդարձակօրէն խօսիլ գոնէ մէկ հիւանդութեան վրայ, որ
բժշկուելու ենթակայ է, ինչպէս նաեւ այն տենդերուն վրայ, որ առաջ կու գան
խօսք ուզելէն եւ ատենապետին խօսք չտալէն: Վերջապէս գրելու ձիրք եւ
դիւրութիւն ունենալէն ետքը, չգիտենք թէ ի՛նչ պատճառաւ այսչափ հեռի կ'ապրի
այդ ասպարէզէն:

Սկզբունքներուն գալով՝ կրնանք հետեւեալները կարծել... այս տարուան համար:

Բարկութեանդ մէջ լեզուիդ իշխե, ականջներուդ համբերութիւն մաղթե, իսկ կիրքերուդ յարատեւութիւն:

Կարծիքները պէտք է սպասատրներու պէս գործածել, շոյելու է գանոնք, եթէ քեզի շահ կը բերեն. իսկ վոնտելու է, երբ շահուդ կը դաշին:

Բամբասանքը հով մ'է, որ կու գայ, կ'անցնի, վա՛յ անոնց, որ ամէն հովէ կը շարժին:

Ստեփան փաշայ վայելուչ հագուստով, միջին հասակով, միջին գերութեամբ գեղեցիկ մարդ մ'է: Վարդի պէս կարմիր այտեր եւ ածուխի պէս սեւ յօնքեր ու մազեր ունի:

Ամէն անգամ որ տեսած եմ զինքը Երեսփոխանական ժողովոյ ատենապետական աթոռի վրայ՝ կարծած եմ, թէ լուծողական դեղ խմած է որ մօտ է իւր արդիւնքը ցուցնելու, եւ միշտ ասանկ պարագաներու մէջ է, որ ոտք ելնելով յայտարարած է «Ատեանը գոցուած է, տեսարք երեսփոխանք»: